

+

ՈՐՈՇՈՒՄ

Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման գործով
07.04.2021թ. կայացված ԱՖ624783 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն
առանց բավարարման թողնելու մասին

<< 14 >> 05 2021թ. 7-13 2867

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ
Ե.Կարապետյանսս վերանայելով քաղաքացի Արսեն Անտանոսյանի ՄԴ/38643-21
դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

Քաղաքացի Արսեն Անտանոսյանը / ծանուցման հասցե՝ ք.Երևան, Նոր Խարբերդ,
21 փողոց, 64/4 տուն / դիմումով խնդրել է անվավեր ճանաչել Ճանապարհային
ոստիկանության վարչական իրավախախտման գործով կայացված ԱՖ624783
որոշումը՝ նշելով իր անհամաձայնությունը:

Վերջինս հեռախոսազանգի միջոցով պնդել է դիմումում նշած հանգամանքները և
պահանջել գրավոր պատասխան:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանության
վարչական իրավախախտման գործով կայացված ԱՖ624783 որոշումը ենթակա է
կատարման հետևյալ պատճառաբանությամբ:

<<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> ՀՀ
օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի <<բ>> կետի համաձայն՝ մեխանիկական
տրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր է կառուցվածքով նախատեսված
անվտանգության գոտիներով կահավորված տրանսպորտային միջոցներով
երթևեկելիս լինել ամրակապված և չփոխադրել անվտանգության գոտիներով
չամրակապված ուղևորներ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.3-րդ հոդվածի
համաձայն՝ տրանսպորտային միջոցների անվտանգության գոտիները չամրակապած
կամ սաղավարտը չկոճկած վիճակում կամ առանց սաղավարտի տրանսպորտային
միջոցները վարելը, ինչպես նաև անվտանգության գոտիները չամրակապած կամ
սաղավարտը չկոճկած կամ առանց սաղավարտի ուղևոր փոխադրելը առաջացնում են

տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 07.04.2021թ. ժամը 18:21-ի սահմաններում Երևան-Սևան-Իջևան Մ-4 ավտոճանապարհի 40կմ հատվածում դիմումատուի վարած <<HYUNDAI>> մակնիշի 56 AR 556 հաշվառման համարանիշի ավտոմոբիլը կանգնեցվել է Ճանապարհային ոստիկանության ՃՊԾ 2-րդ սպայական գումարտակի, 3-րդ սպայական վաշտի, 2-րդ սպայական դասակի տեսուչներ Ռ.Աղաջանյանի և Ա.Ստեփանյանի կողմից՝ <<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի <<Բ>> կետի պահանջը խախտելու համար, այն է՝ վարորդն ավտոմոբիլը վարել է անվտանգության գոտիով չամրակապված վիճակում և կայացվել է ԱՖ624783 որոշումը՝ վերջինիս Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 123.3-րդ հոդվածով՝ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

<<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի <<ա>> կետի համաձայն՝ Ճանապարհային ոստիկանության ծառայողը պարտավոր է տրանսպորտային միջոցը կանգնեցնել, եթե ակնհայտ կամ տեխնիկական միջոցների օգտագործմամբ երևում է, որ վարորդը խախտել է ճանապարհային երթևեկության կանոնների պահանջները: Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ երթևեկության սահմանված արագության գերազանցման և տրանսպորտային միջոցների ապակիների լուսաթափանցելիության սահմանված չափի խախտումների համար պատասխանատվություն է առաջանում, երբ տվյալ խախտումը փաստարկված է համապատասխան տեխնիկական միջոցների կիրառմամբ:

Ճանապարհային ոստիկանության ծառայողների կողմից տրված պարզաբանումների համաձայն՝ վարորդի կողմից կատարված իրավախախտումը հիմնավորող տեխնիկական միջոցների կիրառմամբ ձեռք բերված այլ ապացույցներ առկա չեն, սակայն իրավախախտումը եղել է անմիջապես իրենց տեսադաշտում, ակնհայտ և պարզ տեսանելի, ինչի կապակցությամբ կազմվել է համապատասխան արձանագրություն և կայացվել ԱՖ624783 որոշումը: Միաժամանակ ոստիկանության ծառայողները հայտնել են, որ իրենց և վարորդի միջև ծառայողական բնույթի խոսակցությունից բացի այլ խոսակցություններ չեն եղել:

Այսպիսով Արսեն Անտանոսյանի արարքում առկա են Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 123.3-րդ հոդվածի հատկանիշները, իսկ ԱՖ624783 որոշումն օրինական է և հիմնավոր, ուստի ելնելով վերոգրյալից և

ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման գործով 07.04.2021թ. կայացված ԱՖ624783 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Արսեն Անտանոսյանին և Ճանապարհային ոստիկանության ՃՊԾ 2-րդ սպայական գումարտակ:



Ե.Կարապետյան